ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 78

«27» դեկտեմբերի 2018 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 141 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության մարզի Մարմաշեն համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մայիսյան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարված փոփոխությունը, որով նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի 2003 թվականի հուլիսի 1-ի վճռով (Գործ՝ թիվ 2-451/5) քաղաքացի Փայլակ Ավետիքի Ղայթանջյանի սեփականությունը ճանաչված Մայիսյան համայնքի 1-ին փողոցի, թիվ 48 հասցեում գտնվող 275.71 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մայիսյան բնակավայրի սեփականությունը համարվող էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կոմունալ

ենթակառուցվածքների գործառնական նշանակության 08-077-0105-0003 կադաստրային ծածկագրով 0.27415 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն՝ այդ հողամասում առկա բնակելի նշանակության անշարժ գույքի նկատմամբ քաղաքացու իրավունքները պետական գրանցման ենթարկելու և հողի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին՝

1)ապահովել սույն որոշումից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2)հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 7	*Դեմ՝*	*Չեռնպահ՝ 1*
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	v		
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	v		
ՍԱՍՈՒՆ ԵՂՈՅԱՆ՝			v
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	v		
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	v		
ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝	v		
ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	v		
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	v		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

<<27>> դեկտեմբերի 2018 թվական

Գյուղ Մայիսյան